Գեստի Կար
ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՂԵԳՆԱՁՈՐ

ԵՂԵԳՆԱՁՈՐ

«Ֆեստիվառ» երաժշտական փառատոնի տարբերանշանը ոգեշնչված է Մարտիրոս Սարյանի «Հայաստան» կտավից:

Սարյանական արտահայտիչ գույները փոխանցում են հայաստանյան վառ ամառային տրամադրությունը՝ «Ֆեստիվառ»-յան շունչը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը և Առաջին ալիքը հրավիրում են քեզ Եղեգնաձոր՝ համտեսելու տեղական արտադրանքը, այցելելու թաքնված և հայտնի անկյուններն ու վայելելու համերգային ծրագիրը:

ԵՂԵԳՆԱՁՈՐ, ՕԳՈՍՏՈՍԻ 24

12:00 - տեղական արտադրանքի տոնավաճառ
Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Նարեկացի փողոցից մինչև Միկոյան փողոց հատվածում

15:00 - համերգ Վայոց ձորի մարզի արտիստների և խմբերի մասնակցությամբ
Վայոց Ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Քաղաքային ամֆիթատրոն

19:30 - «Լադանիվա». մենահամերգ
Քաղաքային ամֆիթատրոն

ՈՒՐ ԳՆԱԼ ԵՂԵԳՆԱՁՈՐՈՒՄ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՎԱՅՐԵՐՈՒՄ



Եղեգնաձորի երկրագիտական թանգարանը հիմնադրվել է 1968 թ.: Այստեղ ներկայացված է գրեթե 12.000 ցուցանմուշ՝ քարեդարյան օբսիդիանե գործիքներ, մ.թ.ա. 3-2-րդ դարերի խեցեգործ իրեր, ուրարտական շրջանի բրոնզե գոտիներ, Եղեգիսի 13-րդ դարի հրեական գերեզմանատնից բերված նմուշներ: Հատկապես տպավորիչ արվեստի գործ է 14-րդ դարի ճարտարապետ Մոմիկին վերագրվող երեք խաչքարերից մեկը: Թանգարանում պահպանվում են նաև Առաջին և Երկրորդ համաշխարհային և Արցախյան պատերազմներին վերաբերող փաստաթղթեր և լուսանկարներ:

Հասցե՝ Վայոց ձորի մարզ, Եղեգնաձոր, Շահումյան 4
Օգոստոսի 24-ին բաց է 10:00-19:30

Եղեգնաձորի պատկերասրահը հիմնադրվել է 1978 թ.: Այստեղ կազմակերպվել են հայ և արտասահմանցի նկարիչների աշխատանքների բազմաթիվ ցուցադրություններ: Մասնաճյուղի վերանորոգումից հետո վերաբացումը համընկել է գրիչ, մանրանկարիչ, քանդակագործ և ճարտարապետ Մոմիկ Վարդպետի ծննդյան 750-ամյակին նվիրված տոնակատարությունների հետ: Այժմ այստեղ ցուցադրվում են հայկական կերպարվեստի նշանավոր վարպետների աշխատանքները:

Հասցե՝ Վայոց ձորի մարզ, Եղեգնաձոր, Մոմիկի 1
Օգոստոսի 24-ին բաց է 10:00-19:30

Մալիշկայի Սուրբ Աննա եկեղեցին կառուցվել է 2000 թ.: Այն զարդարված է որմնանկարներով. խորանի պատի վրա Ս. Հոգու աղավնակերպ պատկերն է, իսկ գմբեթի կամարների վրա՝ չորս Ավետարանիչների որմնանկարները: Եկեղեցու պատերին պատկերված են Քրիստոսի ծննդյան, մկրտության, խաչելության, հրեշտակի կողմից հարության ավետումի դրվագները, ինչպես նաև սբ. Աննայի՝ Մարիամ Աստվածածնի մորը նվիրված որմնանկարը: Բակում գտնվում է հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարան և հուշահամալիր:

Սուրբ Աստվածածին եկեղեցին կառուցվել է 12-րդ դարում: Այն բազիլիկ կառույց է, ներսից զարդարված է հինգ սրբապատկերներով, որոնց վրա պատկերված են Հիսուսի մկրտության, խաչելության, Հիսուսը մանուկներին օրհնելիս և Սուրբ Աստվածածնի պատկերները: Խորանի պատին սերովբեների, քերովբեների և հրեշտակների պատկերներ են, ինչպես նաև խաչեր ու զարդանախշեր: Եկեղեցու բակում և պատերի մեջ տեղադրված են խաչքարեր, որոնցից մի քանիսը թվագրվում են 12-րդ դարով:

Արկազի «Սուրբ Խաչ» վանքը նշանավոր ուխտատեղի է, որը գտնվում է Արկազն գյուղատեղիում: Հայ հոգևորական և պատմաբան Ստեփանոս Օրբելյանն իր գրություններում վանքը հիշատակել է 8-րդ դարում: Եկեղեցու հարավարևելյան ավանդատանն է ամփոփված Հիսուս Քրիստոսի խաչելության փայտի մասունքը, որի համար էլ այն ստացել է «Սուրբ Խաչ» անվանումը: Վանքի մասին առաջին հիշատակումը թվագրվում է 7-րդ դարով: Ներկայիս եկեղեցին հիմնովին վերաշինվել է 1870-1871 թթ.:

Բոլորաբերդը կառուցել է Պռոշ իշխանը 13-րդ դարում, ուստի տեղացիներն այն անվանել են Պռոշաբերդ, Պռոշ իշխանի բերդ: Այն եղել է իշխանանիստ, ունեցել է բազալտաշար պարիսպ և ջրմուղ, որի խողովակները նշմարվում են մինչև այսօր: Պահպանվել են բերդի պարիսպը և բուրգերը, սակայն ներքին պաշտպանական կառույցները, զինանոցները, զորանոցները և Պռոշյան իշխանների պալատը ավերվել են: Բերդի արևելյան կողմում կա կանգուն մատուռ, իսկ 1-2 կմ դեպի հարավ-արևմուտք գտնվում է Սպիտակավոր Ս. Աստվածածին վանքը:

Քյոշկ ամրոցը գտնվում է Եղեգիս և Մոզան գետերի միջև գտնվող բլրի մոտ: Այն գոյություն է ունեցել մ.թ.ա. 2-1 հազարամյակներում, Սյունյաց աշխարհի հնագույն շինություններից մեկն է: Եռաշարք պարիսպներով Քյոշկ ամրոցը կանգուն է մինչև այսօր: 461 թ. Գյուտ Արահեզացի կաթողիկոսի պատվերով ամրոցին կից կառուցվում է Վարդանանց եկեղեցին: 17-րդ դարում՝ եկեղեցու խոնարհումից հետո, այդ նույն տեղում կառուցվում է մեկ այլ եկեղեցի՝ Սուրբ Սարգիս անվամբ, որն այժմ կոչվում է Սուրբ Մարիամ Աստվածածնի անունով:

Սպիտակավոր Սուրբ Աստվածածին վանքի շինարարությունը նախաձեռնել է իշխան Էյաչի Պռոշյանը, իսկ նրա որդին՝ Ամիր Հասան II-ը, 1321 թ. ավարտել է այն: Վանքը հայտնի է նաև Ծաղկեվանք, Ծաղկի վանք, Գյուլիվանք անուններով: Այն փոքր վանական համալիր է՝ ամբողջությամբ զարդարված բուսական և երկրաչափական զարդաքանդակներով: 1987 թ. Սպիտակավոր Սուրբ Աստվածածին եկեղեցու բակում հուղարկավորել են Գարեգին Նժդեհի մասունքները:

Թանահատի վանքը գտնվում է Վերնաշեն գյուղի հարավարևելյան հատվածում: Այն կառուցված է կարմրավուն քարից, ինչի շնորհիվ ստացել է երկրորդ անվանումը՝ Կարմիր վանք: Պատմաբան Ստեփանոս Օրբելյանը եկեղեցին թվագրում է 8-րդ դարով: Հետագայում՝ 1273-1279 թթ., Պռոշյանների իշխանական տոհմը 8-րդ դարի մատուռի տեղում կառուցեց գլխավոր եկեղեցին՝ Սուրբ Ստեփանոսը, որին հյուսիսից կից է Սուրբ Նշան եկեղեցին: Թանահատի վանական համալիրի մաս են կազմում նաև այգիներ, հողամասեր և գերեզմանոցներ:

2-րդ աշխարհամարտի զոհերին նվիրված հուշահամալիրը գտնվում է Եղեգնաձոր քաղաքում, կառուցվել է 1970 թ., ճարտարապետը Ռ. Իսրայելյանն է: Հուշահամալիրի մոտ է գտնվում Т-34 մարտական տանկը, որը պատվանդանին է բարձրացել 1970թ. մայիսի 1-ին, մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, Բեռլին է մտել և 5 անգամ ստացել է գվարդիական կոչում: Այն ստացել է «Հովսեփյանի տանկ» անվանումը:

Գլաձորի համալսարանի արգելոց-թանգարանը գտնվում է Վերնաշենի Սբ. Հակոբ եկեղեցում: Այստեղ ներկայացված է Գլաձորի համալսարանի պատմությունը: Ժառանգաբար պահպանվել և թանգարանին են փոխանցվել Գլաձորի համալսարանի մանրանկարիչների, նկարազարդողների և պատմիչների ստեղծած բազմաթիվ աշխատանքներ: Թանգարանի հարակից տարածքում գտնվում է Թանահատի վանքը, որտեղ տեղակայված է եղել համալսարանը և կոչվել «Երկրորդ փառահեղ Աթենք» կամ «Մայրաքաղաք իմաստնության»:

Թռչունների կամ Արենիի քարանձավը գտնվում է Եղեգնաձորից 12 կմ հեռու՝ Արենի գետի ձախ ափին: Այն փոքրիկ քարայրների համալիր է՝ բաղկացած 3 սրահից և ունի մոտ 500 մ² մակերես: 2008 թ. պեղումների արդյունքում քարանձավում հայտնաբերվել է աշխարհում ամենահին՝ ավելի քան 5500 տարեկան կաշվե կոշիկը: Ավելի ուշ այստեղ հայտնաբերվեցին էնեոլիթյան դարաշրջանի գինեգործության վկայություններ՝ չորացած խաղող, ամանեղեն, հագուստ, կանացի գանգեր և այլն: Թռչունների քարանձավը համարվում է աշխարհում գինու առաջին արտադրամասը:

Միջնադարյան կամուրջը կառուցված է Արփա գետի վրա, գտնվում է Հյուսիս - Հարավ մայրուղու հարավային հատվածում՝ Ագարակաձոր գյուղի մոտ: Ըստ տեղական ավանդությունների՝ 13-րդ դարում Պռոշյան իշխանն այն կառուցել է, որպեսզի հեշտ անցնի դեպի գետի մյուս ափին գտնվող իր պալատը: Այսօր տեղացի անասնապահներն օգտագործում են այն իրենց հոտերը տեղափոխելու համար: Կամուրջի սրածայր գագաթից հիանալի երևում է գետը շրջապատող գեղեցիկ համայնապատկերը:

Արենի գինու գործարանը հիմնադրվել է 1994 թ., այստեղ այցելուներին հնարավորություն է ընձեռվում համտեսել գործարանի արտադրության բարձրորակ գինիները: Պատմականորեն Արենին համարվում է հայկական գինեգործության «օրրան»: Այստեղ է մշակվում խաղողի հնագույն տեսակներից մեկը, որը կոչվում է «Արենի»: Արենիի քարանձավներից մեկում հայտնաբերվել է գինու պատրաստման համար նախատեսված խաղողի ճմլարան, որը մոտ 6000 տարեկան է: 2009 թ. այստեղ կազմակերպվում է «Արենի» գինու ամենամյա փառատոնը:

Նորավանք վանական համալիրը կառուցվել է 13-ից 14-րդ դարերում: Այն ճարտարապետության, քանդակագործության, վիմագրության, գրչության և մանրանկարչության խոշոր կենտրոն է եղել: Վանական համալիրը բաղկացած է Սուրբ Աստվածածին (Բուրթելաշեն) դամբարան-եկեղեցուց, Սուրբ Ստեփանոս Նախավկա եկեղեցուց, նրան արևմուտքից կից գավթից, Սուրբ Գրիգոր եկեղեցուց, միջնադարյան մատուռների և շինությունների մնացորդներից, նորակառույց վանատնից:

ԳՈՐԾՈՒՄ Է ՀԱՏՈՒԿ ԵՐԹՈՒՂԻ

Արջերի քարանձավը Հայկական լեռնաշխարհի ամենամեծ ու գեղեցիկ կարստային քարանձավներից է: Անվանումը կապված է սրահներից մեկում հայտնաբերված արջերի ոսկորների հետ: Գտնվում է ծովի մակերևույթից 1655 մ բարձրության վրա: Այն 1978 թվականին հայտնաբերել են որսորդները: Քարանձավի միջին ջերմաստիճանն է 10,2°C է, ընդհանուր երկարությունը՝ 3500 մ, որը երկրի ընդերք է խորանում ավելի քան 700 մ: Քարանձավի ներսում հսկայական դահլիճներ կան, որոնք միանում են նեղ միջանցքներով, որոնցով անցնել հնարավոր է միայն սողալով: Առանց ուղեկցորդի Արջերի քարանձավ մտնելը վտանգավոր է կյանքի համար:

ԳՈՐԾՈՒՄ Է ՀԱՏՈՒԿ ԵՐԹՈՒՂԻ

ՍՐՃԱՐԱՆՆԵՐ ԵՎ ՌԵՍՏՈՐԱՆՆԵՐ ԵՂԵԳՆԱՁՈՐՈՒՄ

«ԼՃԱԿ» ՌԵՍՏՈՐԱՆ
Երևանյան խճուղի 1/13/1,
Երևան-Եղեգնաձոր ավտոմայրուղի 90-րդ կմ
+374 94 99 83 55

«ԼԱՂԱՍ» ԳԱՍՏՐՈ ԲԱԿ
Եղեգնաձոր, Լևոնյան 25
+374 77 53 35 61

«ԵՂԵԳՆ» ՌԵՍՏՈՐԱՆ
Եղեգնաձոր, Երևանյան խճուղի 14
+374 93 88 02 89

«ԸՆԿՈՒՅԶԵՆՈՒ ՏԱԿ»
Եղեգնաձոր, Լևոնյան 14
+374 41 78 07 90

«ԱՅԳԻ»
Եղեգնաձոր, Մոմիկի 1/1
(0281) 60909

«ԳԵՏԱՓ» ՌԵՍՏՈՐԱՆ
Գետափ
+374 94 00 47 07

«ՊՈՆՁԻԿԱՆՈՑ»
Եղեգնաձոր, Միկոյան 8/4
(0281) 24234
+374 93 85 31 58

«ԲԱՐԴԻՆԵՐ» ՌԵՍՏՈՐԱՆ
Երևան-Եղեգնաձոր մայրուղի
+375 98 046036

«ԵՂԵԳՆԱՁՈՐ» ՖՈՒԴ ԿՈՐՏ
Եղեգնաձոր, Երևանյան խճուղի 7
+374 77 00 09 00

«ՔԱՐԻ ՏԱԿ» ՌԵՍՏՈՐԱՆ
Եղեգնաձոր, Երևանյան խճ. 1/11
+374 91 02 22 11

«ՀԱՄՈՎ ՏՈՒՆ»
Եղեգնաձոր, Երևանյան խճ. 13
+374 77 02 24 00

«ՍԻՍԱԿԱՆ» ՌԵՍՏՈՐԱՆ
Շատին-Գետափ ավտոմայրուղի
+374 94 08 08 99

«OLD BRIDGE WINERY»
Եղեգնաձոր, Երևանյան խճուղի 1
+374 55 09 87 99

«BURGERY BY OLD BRIDGE»
Եղեգնաձոր, Երևանյան խճ. 5
+374 98 098 799

ԿԵՑԱՎԱՅՐԵՐ ԵՂԵԳՆԱՁՈՐՈՒՄ

«CROSSWAY CAMPING»
Եղեգնաձոր, Երևանյան խճուղի
+374 94 78 93 91
+374 93 22 90 55

«GUEST HOUSE NATALY»
Եղեգնաձոր, Իսրայել Օրու 3
+374 94 97 99 89

«KARINE B&B»
Եղեգնաձոր, Սպանդարյան 66
+374 94 60 06 47

«GREEN STONE BOUTIQUE HOTEL»
Եղեգնաձոր, Գլաձորյան 2-րդ նրբ.
+374 94 55 52 22

«YEGHEGN HOTEL»
Եղեգնաձոր, Մոմիկի 8/8
+374 93 73 23 08

«CHERRY GARDEN BOUTIQUE HOTEL»
Եղեգնաձոր, Մոմիկի 7/1
+374 93 20 54 84

«GUEST HOUSE HASMIK»
Եղեգնաձոր, Սպանդարյան 28
+374 77 97 97 07

«B&B SPANDARYAN HOUSE»
Եղեգնաձոր, Սպանդարյան 45
+374 93 69 69 42

«ARPA HOTEL»
Եղեգնաձոր, Գրիգոր
Նարեկացու 8/1
(0281) 2 06 01

«SHUSHAN B&B»
Եղեգնաձոր, Անդրանիկի 8
+374 77 07 23 41

«LUSYA B&B»
Եղեգնաձոր, Խաչատրյան 28
+374 93 22 79 91

«OLD BRIDGE B&B»
Եղեգնաձոր, Լևոնյան 16
+374 55 09 87 99

«NATALY CAMPSITE»
Եղեգնաձոր, Իսրայել Օրու նրբ. 3
+374 94 97 99 89

«GREENFIELD CAMPING»
Եղեգնաձոր, Երևանյան փող.
+374 77 77 88 60

«GOHAR'S GUEST HOUSE»
Եղեգնաձոր, Սպանդարյան 44
+374 94 33 29 93

«B&B RUZAN»
Եղեգնաձոր, Սպանդարյան 5
+374 94 69 23 63

«UNDER THE WALNUT TREE B&B»
Եղեգնաձոր, Լևոնյան 14
+374 41 78 07 90

«NUR HOTEL YEGHEGNADZOR»
Եղեգնաձոր, Երևանյան խճ.
+374 94 94 00 87

«ANUSHIK B&B»
Եղեգնաձոր, Մաշտոցի 6
+374 77 07 42 06

«HAYHOME»
Եղեգնաձոր, Կամոյի 2/2
+374 94 40 03 68

«ON THE ROAD»
Եղեգնաձոր, Այգեձորի 2
+374 98 07 22 52

«GUEST HOUSE ARMINA»
Եղեգնաձոր, Ավագյան 29
+374 98 75 43 21

«SHUSHAN GUEST HOUSE»
Վերնաշեն
+374 93 36 18 11

«7ROOMS BOUTIQUE HOTEL»
Եղեգնաձոր, Երևանյան 2
+374 33 88 04 11

HAC U KAC HOTEL
Եղեգնաձոր, Վարդան Զորավար 5
+374 98 00 06 04

Գեստի Կար
ՀԱՅԱՍՏԱՆ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ԱՆԻՔ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ՀՀ ԵՂԵՂՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔՊԵՏԱՐԱՆ